

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

### ԴԻՄՈՐԴԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

#### 1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԵՊՀ մանկավարժության ամբիոնը ստեղծվել է 1921թ.-ին մանկավարժության ֆակուլտետի հիմնադրման հետ միաժամանակ: Նա իր 99 տարվա գիտակրթական և գիտամանկավարժական գործունեության ընթացքում ունեցել է մեծ ձեռքբերումներ և նվաճումներ ինչպես կրթության, այնպես էլ գիտության ոլորտում: Մանկավարժության ամբիոնի կայացման և ուսումնագիտական աշխատանքների կազմակերպման ու զարգացման գործում իրենց ծանրակշիռ ներդրումն են ունեցել ճանաչված պրոֆեսորներ Գ.Էդիյանը, Ա.Շավարշյանը, Մ.Սանթրոսյանը, Ա. Մովսիսյանը, Հր. Քարամյանը, Թ. Ջուհարյանը, Հ. Մախչանյանը, դոցենտներ Ա. Իգնատյանը, Ս. Խուրոյանը, Ալ. Մանուկյանը, Թ. Հուրիխանյանը, Թ. Բալասանյանը, Լ. Ալեքսանյանը: Ամբիոնի հիմնադիրների ստեղծած արժեքների պահպանման ու զարգացման գործին իրենց մեծ վաստակն են բերում ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Ն. Հարությունյանը, դոցենտներ Թ. Հարությունյանը, Գ. Բաբայանը, Վ. Գյուլբուրդյանը, Ա. Ղազարյանը, Ա. Գրիգորյանը, Ա. Աշիկյանը, Ա. Ալեքսանյանը, ասիստենտներ Մ. Ավետիսյանը, Լ. Հայրապետյանը և ուրիշներ:

**2017 թ.-ի հուլիսին** Մանկավարժության ամբիոնը դուրս եկավ ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի կազմից, և ամբիոնի հիման վրա ձևավորվեց Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը:

Մանկավարժության ամբիոնի գիտամանկավարժական առաքելությունը 1921թ.-ից մինչ օրս միտված է եղել մեր երկրի կրթության համակարգի բարելավմանը, մանկավարժության ամբիոնի և գիտության զարգացմանը, որակյալ կադրերի պատրաստմանը և երիտասարդ սերունդ կրթելու և դաստիարակելու պատասխանատու գործին:

ԵՊՀ մանկավարժության ամբիոնի կրթական գործունեությունը սկսվում է 1921թ.-ից, երբ մանկավարժության ամբիոնը աշխատում էր համալսարանի 14 ֆակուլտետներում՝ նպաստելով տարբեր մասնագիտություններից հանրակրթական դպրոցների համար որակյալ ուսուցիչներ պատրաստելու գործին:

1998թ.-ից մանկավարժության ամբիոնը դարձել է թողարկող ամբիոն՝ բացելով *«Կրթության կազմակերպում» մագիստրոսական առաջին մասնագիտական կրթական ծրագիրը* հանրապետությունում (առկա ուսուցմամբ): Կրթական ծրագիրը պատրաստում է կրթության կազմակերպիչներ հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտների համար ( Հայաստան, Արցախ, սփյուռք): 2008թ.-ից կրթական ծրագիրը կազմակերպվում է նաև հեռակա ուսուցմամբ:

Կրթական ծրագրի ավարտին տրվում է Կրթության մագիստրոսի որակավորում:

2010թ.-ին մանկավարժության ամբիոնի ջանքերով հիմնվում է երկրորդ կրթական ծրագիրը, այս անգամ բակալավրիատում՝ *«Սոցիալական մանկավարժություն» մասնագիտությամբ* (առկա ուսուցմամբ): Ծրագրի նպատակն է Հայաստանի հանրակրթական դպրոցների և այլ սոցիալական ինստիտուտների համար պատրաստել որակյալ սոցիալական մանկավարժներ, ովքեր կիրականացնեն սոցիալ-մանկավարժական արդյունավետ գործունեություն և կնպաստեն սովորողների շրջանում սոցիալական, մանկավարժական, հոգեբանական, վարքագծային և հաղորդակցական տարաբնույթ խնդիրների լուծմանը՝ ելնելով իրենց մասնագիտական գործունեության նպատակից, խնդիրներից, գործառույթներից, թիրախային խմբերի առանձնահատկություններից և տեխնոլոգիաներից:

Կրթական ծրագրի ավարտին տրվում է Մանկավարժության բակալավրի որակավորում:

2016թ.-ին մանկավարժության ամբիոնը բացել է նոր *մագիստրոսական կրթական ծրագիր՝ «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ* (ուսուցման ձևը՝ հեռակա): Կրթական ծրագրի նպատակն է մանկավարժի որակավորում տալ այն մասնագետներին, ովքեր ունեն բազային կրթություն (բակալավրիատ, դիպլոմավորված մասնագետ), սակայն չունեն ուսուցչի որակավորում և ցանկանում են աշխատել հանրակրթության միջին և ավագ դպրոցներում: Ուսման տևողությունը 1,5 տարի է, կրթական ծրագրի ավարտին տրվում է Մանկավարժության մագիստրոսի որակավորում:

**2016-2017ու. տարվանից** Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը ԵՊՀ 12 ֆակուլտետների հետ միասին բակալավրիատում կազմակերպում է մանկավարժի որակավորման շնորհման <<240+30>> կրեդիտ նոր համակարգը :

Մանկավարժության ամբիոնը մասնագիտական-կրթական գործունեության շրջանակներում առաջիկայում նախատեսում է բացել «Կիրառական սոցիալական մանկավարժություն» մագիստրոսական նոր կրթական ծրագիր՝ ընտանիքներում, դպրոցներում, հատուկ հաստատություններում սոցիալ-մանկավարժական կիրառական աշխատանքներ իրականացնելու համար: Այս կրթական ծրագրի

արդյունավետ կազմակերպման համար նախատեսվում է նաև «Կիրառական սոցիալական մանկավարժության» լաբորատորիայի ստեղծում, որտեղ կկազմակերպվեն ուսանողների գործնական դասերը և կիրականացվեն սոցիալ-մանկավարժական բազմաթիվ ուսումնասիրություններ:

**Բեղմնավոր է ԵՊՀ մանկավարժության ամբիոնի գիտահետազոտական գործունեությունը:** Մանկավարժության ամբիոնն իր գործունեության վերջին 20 տարիների ընթացքում կատարել է հսկայածավալ գիտահետազոտական աշխատանքներ, որոնց արդյունքում տպագրվել է 6 մենագրություն, 2 դպրոցական դասագիրք, 2 ուսուցչի մեթոդական ձեռնարկ, 4 բուհական ձեռնարկ, Մանկավարժական հանրագիտարան՝ 2 հատորով, Մանկավարժական բառարան, ավելի քան 400 գիտական հոդված և՛ Հայաստանում, և՛ արտերկրներում՝ Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան, Ուկրաինա, ԱՄՆ, Հունգարիա, Լեհաստան, Գերմանիա, Լիբանան, Ավստրիա, Իսպանիա:

**Վերջին 20 տարիների** ընթացքում մանկավարժության ամբիոնը ուսումնասիրել և զարգացրել է *մանկավարժության 12 գիտաճյուղ*. մանկավարժության պատմություն, համեմատական մանկավարժություն, սոցիալական մանկավարժություն, կրթության կառավարում, մանկավարժական վալեոլոգիա, մանկավարժական արքեոլոգիա, մանկավարժական անտրոպոլոգիա, իրավաբանական մանկավարժություն, երջանկության մանկավարժություն, արվեստի մանկավարժություն, մանկավարժական արքեոլոգիա, մանկավարժական ֆուտուրոլոգիա, մանկավարժական քվալիմետրիա և մանկավարժական ռիսկաբանություն: Ուսումնասիրությունների արդյունքում տպագրվել է շուրջ 300 գիտական հոդված ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանյան տարբեր երկրների գիտական հանդեսներում /Ուկրաինա-Չերկասի համալսարանի Вестник, Կրոպիվնիցկիի պետական համալսարանի միջազգային գիտական նյութերի ժողովածու և Լեհաստանի Վարշավայի համալսարանի միջազգային գիտական նյութերի ժողովածու/ :

**2012թ.-ից** մանկավարժության ամբիոնին կից գործում է ԲՈՀ-ի գիտական աստիճաններ շնորհող մանկավարժության 065 մասնագիտական խորհուրդը՝ ԺԳ.00.01,ԺԳ.00.02 թվանիշներով (նախագահ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն.Կ.Հարությունյան) : Մանկավարժության 065 մասնագիտական խորհուրդը 2012թ.-ի մարտից մինչև 2018թ.-ի դեկտեմբերը կազմակերպել է 58 ատենախոսության պաշտպանություն, որից 7-ը՝ դոկտորական, 51-ը՝ թեկնածուական, այդ թվում 6-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից:

Մանկավարժության ամբիոնը գիտական որակյալ կադրեր է պատրաստում ոչ միայն Հայաստանի, Արցախի, այլև Իրանի Իսլամական Հանրապետության և սփյուռքի գաղթօջախների համար: Վերջին 20 տարիների ընթացքում մանկավարժության ամբիոնը մանկավարժության ոլորտին տվել է 4 գիտությունների դոկտոր, 18 գիտությունների թեկնածու, որից 6-ը՝ ԻԻՀ-ի քաղաքացի:

**ԵՊՀ մանկավարժության ամբիոնը իրականացնում է միջազգային գործունեություն:** Մանկավարժության ամբիոնի գիտական գործունեությունը դուրս է եկել հանրապետության սահմաններից:

ԵՊՀ մանկավարժության ամբիոնը կազմակերպել է միջազգային գիտաժողովներ և կլոր սեղաններ:

**1997թ.մայիսին** կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ «**Անչափահասների դաստիարակության հիմնահարցերը շուկայական հարաբերությունների պայմաններում**» խորագրով, որին մասնակցում էին մանկավարժներ ԱՄՆ-ից, Լիբանանից և Սիրայից:

**2004թ.-ի հունիսին** ամբիոնը կազմակերպել է կլոր սեղան՝ «**Նորովի մոտեցում կրթության համակարգի կառավարմանը**» թեմայով, որին մասնակցում էին մանկավարժներ Իրանից:

**2014թ.-ի հոկտեմբերի 17-18-ին** Ծաղկաձորում տեղի է ունեցել մանկավարժության ամբիոնի կազմակերպած «**Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները**» խորագրով տարածաշրջանային միջազգային գիտաժողովը՝ նվիրված ԵՊՀ-ի հիմնադրման 95 և մանկավարժության ամբիոնի 93-ամյակներին: Գիտաժողովին մասնակցում էին գիտնական-մանկավարժեր Հայաստանից, Իրանից և Վրաստանից:

**2017թ.-ի հոկտեմբերին 16-17-ին** Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը կազմակերպել է «**Կրթության հիմնահարցերը 21-րդ դարում**» երկօրյա միջազգային գիտաժողով, որի աշխատանքներին մասնակցում էին ոչ միայն Հայաստանի /120 մասնակից/, այլ նաև աշխարհի 6 երկրի՝ Գերմանիայի, Ավստրիայի, Նիդեռլանդների, Անգլիայի, Վրաստանի և Ուկրաինայի համալսարանների 18 գիտնական-մանկավարժներ :

Միջազգային գիտաժողովին մասնակցում էր նաև Եվրոպական կրթական հետազոտությունների Ասոցիացիայի /EERA/ նախագահ պրոֆ. Թեո Վուրելսը:

**2014թ.-ից** Մանկավարժության և կրթության զարգացման Կենտրոնը Եվրոպական կրթական հետազոտությունների Ասոցիացիայի /EERA/ անդամ է:

**2019թ.-ի դեկտեմբերին** ստորագրվել է պայմանագիր ԵՊՀ-ի և EERA-ի միջև, որի համաձայն Ասոցիացիայի կոնգրեսը 2022 թ.-ին անցկացվելու է Հայաստանում՝ ԵՊՀ-ում, կամակերպիչը Մանկավարժության և Կրթության զարգացման կենտրոնն է:

**2019 թ.-ի հուլիսի 3-ին** Կենտրոնը կազմակերպել է <<Կրթության կառավարման հիմնախնդիրները բարձրագույն կրթության համակարգում>> խորագրով մեկօրյա ամառային դպրոց՝ նվիրված ԵՊՀ 100- ամյակին: Ամառային դպրոցին մասնակցում էր Ավստրիայի Գրացի համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ, դոկտոր պրոֆեսոր Յոհաննա Հոպֆները, ինչպես նաև Հայաստանի տարբեր բուհերի կրթության կառավարման ոլորտի մասնագետներ և մանկավարժներ:

Մանկավարժության ամբիոնի դասախոսները գիտական զեկուցումներով հանդես են գալիս ոչ միայն հանրապետական, այլև միջազգային գիտաժողովներին. Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, ԱՄՆ, Հունգարիա, Անգլիա, Գերմանիա, Շվեյցարիա, Իսպանիա, Ավստրիա:

**2000թ.-ի մարտին** ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ն.Հարությունյանը Բուդապեշտում /Հունգարիա/ մասնակցել է կրթական չափորոշիչների ձևավորման վերաբերյալ միջազգային գիտաժողովին:

**2009թ.-ի ապրիլին** ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ն.Հարությունյանը Լոնդոնում /Անգլիա/ մասնակցել է կրթության որակի ապահովման միջազգային թրեյնինգներին:

**2019թ.-ի նոյեմբերին** ամբիոնի դոցենտ Ա. Ալեքսանյանը վերապատրաստումներ է անցել Ավստրիայի Գրացի համալսարանում:

**2020թ.-ի մայիսին** ամբիոնի դոցենտ Ա.Ալեքսանյանը մասնակցել է /առցանց/ Կազանի /ՌԴ/ համալսարանի միջազգային գիտաժողովին:

Մանկավարժության ամբիոնը միջբուհական պայմանագրի շրջանակներում սերտորեն համագործակցում է ՌԴ Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ֆակուլտետի հետ: **2017թ.-ի ապրիլին** մանկավարժության ամբիոնից 1 հայցորդ և 1 մագիստրանտ մեծ հաջողությամբ մասնակցել են ՄՊՄՀ-ի կազմակերպած միջբուհական ուսանողական միջազգային գիտաժողովին՝ արժանանալով «Լավագույն զեկույց» անվանակարգին:

**2018 թվականի մարտին** Կենտրոնի դոցենտ, մ. գ. թեկնածու Ա. Ալեքսանյանը մասնակցել է ՄՊՄՀ-ի կազմակերպած երիտասարդ դասախոսների <<Լավագույն դասախոս>> միջազգային մրցույթին՝ ընդգրկվելով լավագույն հնգյակի մեջ:

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը միջբուհական պայմանագրերի շրջանակներում համագործակցում է նաև Լեհաստանի Ժեշովի համալսարանի, Վարշավայի համալսարանի, Ավստրիայի Գրացի համալսարանի, Ուկրաինայի Օդեսայի համալսարանի, Չերկասի համալսարանի, Կրոպիվնիցկիի պետական համալսարանի, Վրաստանի պետական համալսարանի հետ:

**2019թ.-ին հունվարին** Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում ստեղծվեց <<Կրթությունը 21-րդ դարում>> միջազգային գիտամեթոդական հանդեսը: Համագործակցում են մանկավարժ-գիտնականներ Եվրոպական և ԱՊՀ 7 երկրներից՝ Ավստրիայից, Գերմանիայից, Լեհաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Բելառուսից, Վրաստանից:

Սերտ է մանկավարժության ամբիոնի համագործակցությունը սփյուռքի հայկական գաղթօջախների հետ. ԱՄՆ, Լիբանան, Սիրիա, Իրան, Կիպրոս: Մանկավարժության ամբիոնի ասպիրանտուրայում և «Կրթության կազմակերպում» մագիստրոսական կրթական ծրագրում սովորում են սփյուռքահայ մեր հայրենակիցները:

1992թ.-ից մինչ օրս Կենտրոնի Մանկավարժության ամբիոնը հետազոտական աշխատանք է կատարում սփյուռքի հայկական դպրոցների կրթադաստիարակչական գործունեության վերաբերյալ: Մանկավարժության ամբիոնի վարիչ դոկտոր, պրոֆեսոր Ն.Հարությունյանը դասախոսություններով հանդես է եկել վերոհիշյալ գաղթօջախների հայագիտական կենտրոններում, ինչպես նաև մասնակցել է տեղի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին (գաղթօջախներում): Մանկավարժության ամբիոնն ակտիվորեն մասնակցել է ԵՊՀ-ի Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի և Սփյուռքի նախարարության համատեղ կազմակերպած սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին՝ դասախոսություններով և կազմակերպչական աշխատանքներով:

## **2. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ և ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ենթահամակարգերն են. Գիտական խորհուրդը և Մանկավարժության ամբիոնը:

### 3. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ և ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊՐՈՏԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը. հիմնական` 14 դասախոս, ներքին համատեղությամբ` 6 դասախոս, արտաքին համատեղությամբ` 5 դասախոս, ժամավճարային հիմունքով` 6 դասախոս: Ընդամենը` 31 դասախոս: Ամբիոնում աշխատում է 5 գիտ. դոկտոր, պրոֆեսոր, 14 գիտ. թեկնածու դոցենտ, 6 գիտ. թեկնածու, ասիստենտ, 6 դասախոս: Ամբիոնն ունի 1 դրույքով 1 լաբորանտ:

### 4. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ՇՆՈՐՀՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում գործում է 3 կրթական ծրագիր.

#### 1. <<ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ>> - ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ /ԱՌԿԱ/

Կրթական ծրագիրը գործում է 2010-2011 ուս. տարվանից: Ներկայումս սովորող ուսանողների թիվը 125 է:

*<<Սոցիալական մանկավարժություն >> կրթական ծրագրի նպատակն է Հայաստանի հանրակրթական դպրոցների և այլ սոցիալական ինստիտուտների համար պատրաստել որակյալ սոցիալական մանկավարժներ, ովքեր կիրականացնեն սոցիալ-մանկավարժական արդյունավետ գործունեություն և կնպաստեն սովորողների շրջանում սոցիալական, մանկավարժական, հոգեբանական, վարքագծային և հաղորդակցական տարաբնույթ խնդիրների լուծմանը՝ ելնելով իրենց մասնագիտական գործունեության նպատակից, խնդիրներից, գործառույթներից, թիրախային խմբերի առանձնահատկություններից և տեխնոլոգիաներից:*

Անցած ուսումնական տարում փոփոխություններ ենք կատարել բակալավրիատի <<Սոցիալական մանկավարժություն>> կրթական ծրագրի ուսումնական պլանում` նրանում ներառելով Մանկավարժության կարևոր գիտաճյուղեր, որոնք սերտորեն աղերսվում են Սոցիալական մանկավարժությանը` մանկավարժական արժեքաբանության, մանկավարժական ֆուտուրոլոգիա, մանկավարժական քվալիմետրիա և մանկավարժական ռիսկաբանություն:

#### 2.<<ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ>>-ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ /ԱՌԿԱ, ՀԵՌԱԿԱ/

Կրթական ծրագիրը գործում է 1998 թ.-ից` առկա, 2009 թ.-ից` հեռակա ուսուցմամբ :

Ուսանողների թիվը 75 է: 2006 թ.-ից մինչ օրս այս կրթական ծրագրում անհատական գրաֆիկով սովորում են սփյուռքահայ ուսուցիչներ և տնօրեններ Լիբանանից, Սիրիայից, Թուրքիայից, Քուվեյթից, Եգիպտոսից և Իրանից:

Փոփոխություններ ենք կատարել նաև մագիստրատուրայի <<Կրթության կազմակերպում>> կրթական ծրագրի ուսումնական պլանում, ներառելով նոր դասընթացներ՝ ինչպիսիք են՝ Նախագծերի կառավարում, Մարդկային ռեսուրսների կառավարում, Կրթական քաղաքականություն և ռազմավարություն, Կրթական հետազոտությունների գնահատում:

### **3.<<ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ և ՄԵԹՈԴԻԿԱ>> – ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ /ՀԵՌԱԿԱ/**

Կրթական ծրագիրը գործում է 2016-2017 ուս. տարվանից: Ուսանողների թիվը 22 է:

**<<Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա>> կրթական ծրագրի նպատակն է.**

- պատրաստել գիտամեթոդական համակարգված գիտելիքների տեր որակյալ մանկավարժներ հանրակրթական դպրոցների համար /միջին և ավագ դպրոց/,
- փոխանցել խոր և համակողմանի գիտելիքներ ուսուցման կազմակերպման ձևերի, ուսուցման սկզբունքների և ուսուցման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների և միջոցների վերաբերյալ:

4. 2016-2017 ուստարվանից Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը ԵՊՀ-ի 12 ֆակուլտետներում կազմակերպում, վերահսկում և կոորդինացնում է **ԿԳՄՍ** Նախարարության կողմից հաստատված Մանկավարժի որակավորման շնորհման <<240+30>> կրեդիտ նոր համակարգը, որի իրագործման արդյունքում համալսարանի 12 ֆակուլտետների ուսանողները բացի մասնագիտական որակավորումից կստանան նաև մանկավարժի որակավորում:

### **5.ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ ԿԱՊՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՀԵՏ**

- <<Սոցիալական մանկավարժություն>> կրթական ծրագրի կարևորությունը և անհրաժեշտությունը պայմանավորված են ոչ միայն աշխատաշուկայի պահանջարկ-առաջարկով, այլև 2004թ.-ին Կառավարության կողմից ընդունված ՀՀ Հանրակրթության պետական կրթակարգով, որտեղ ամրագրված է, որ ՀՀ բոլոր



դպրոցները պետք է ունենան սոցիալական մանկավարժի հաստիք՝ դպրոցում առկա սոցիալ- մանկավարժական տարաբնույթ խնդիրները լուծելու համար:

Սոցիալական մանկավարժի մասնագիտության անհրաժեշտությունը պայմանավորված է նաև Հայաստանի հանրակրթական դպրոցներում ներառական ուսուցման կազմակերպմամբ, որտեղ չափազանց կարևոր է սոցիալական մանկավարժի գործունեությունը:

**<<Սոցիալական մանկավարժություն>>** բակալավրիատի կրթական ծրագրի շրջանավարտները, ստանալով սոցիալական մանկավարժի որակավորում, կարող են աշխատել որպես սոցիալական մանկավարժ Հայաստանի Հանրապետության միջնակարգ հանրակրթական բոլոր դպրոցներում և հատուկ հաստատություններում:

- **<<Կրթության կազմակերպում>>** մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտները.

- կարող են աշխատել կրթության կազմակերպիչներ հանրակրթության ոլորտում,
- կարող են աշխատել կրթության կազմակերպիչներ բարձրագույն կրթության ոլորտում:

Առաջիկայում նախատեսվում է կազմակերպել <<Կրթության կազմակերպում>> մագիստրոսական կրթական ծրագրի հեռավար ուսուցում հայերեն և անգլերեն լեզուներով:

- **<<Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա>>** մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտները, ստանալով մանկավարժի որակավորում, կարող են աշխատել որպես ուսուցիչ Հայաստանի Հանրապետության միջնակարգ հանրակրթական բոլոր դպրոցներում՝ միջին և ավագ:

Առաջիկայում նախատեսվում է կազմակերպել <<Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա >> մագիստրոսական կրթական ծրագրի հեռավար ուսուցում սփյուռքի մեր հայրենակիցների համար:

Կենտրոնը պլանավորել է ստեղծել Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի թե՛ բակալավրիատի, և թե՛ մագիստրատուրայի Շրջանավարտների միություն՝ սերտացնելով կապը Կենտրոնի և նրա շրջանավարտների միջև:

## **6. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔ և ԺԱՄԱՆՑ**

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ՈԻԳԸ-ն և ՈԻԽ-ն իրենց ակտիվ մասնակցությունն են բերում ԵՊՀ ՈԻԳԸ-ի և ՈԻԽ-ի աշխատանքներին: <<Սոցիալական մանկավարժություն>> և <<Կրթության կազմակերպում >> կրթական ծրագրերի ուսանողներն ամբիոնի դասախոսների ղեկավարությամբ ելույթներով մասնակցում են ՈԻԳԸ-ի գարնանային և աշնանային նստաշրջաններին: Մասնակից ուսանողներից շատերի ելույթները ճանաչվել են լավագույնը և ՈԻԳԸ –ի գիտական տեղեկագրում տպագրվել որպես հոդված: Կենտրոնի ուսանողները ակտիվորեն համագործակցում են այլ բուհերի ՈԻԳԸ-ների հետ՝ մասնակցելով միջբուհական ուսանողական գիտական ընկերությունների աշխատանքներին՝ արժանանալով տարբեր մրցանակների: ԵՊՀ Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ուսանողները տարիներ շարունակ ակտիվորեն մասնակցում են համալսարանական մշակութային կյանքին, ուսանողական փառատոներին, Ուրախների ու հնարամիտների ակումբի միջոցառումներին, կամավորական աշխատանքներին:

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ուսանողների 25%-ը մասնակցում է Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի գիտխորհրդի աշխատանքներին:

Երկու տարվա կտրվածքով ներկայացնենք Կենտրոնի ՈԻԳԸ-ի և ՈԻԽ-ի գործունեությունը.

- Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ՈԻԳԸ-ն **հոկտեմբերի 3-4 2019թ.-ի** կազմակերպել է միջազգային ուսանողական գիտական նստաշրջան ԵՊՀ-ի 100 ամյակին նվիրված, որին մասնակցել են ուսանողներ ոչ միայն ԵՊՀ –ից, Հայաստանի տարբեր բուհերից, այլ նաև Ռուսաստանի Դաշնության 2 բուհից 4 մասնակից: ՈւԳԸ-ն մեկ տարվա ընթացքում կազմակերպել է նաև քննարկումներ, հանդիպումներ, սեմինարներ և այլ միջոցառումներ:
- Կենտրոնի ՈԻԽ-ն նույնպես կազմակերպել է տարբեր միջոցառումներ ուսումնական տարվա ընթացքում. հանդիպումներ, կինոդիտումներ, բանավեճեր, <<Ինչ, որտեղ, երբ>> մրցույթ, այց մանկատներ /Զատիկ/ , այց ծերանոց՝ իրականացնելով կամավորական աշխատանքներ:
- **2018թ.-ի հոկտեմբերի 2-ին** ՈԻԽ-ն և ՈւԳԸ –ն Սոցիալական մանկավարժություն կրթական ծրագրի չորս կուրսերի ուսանողների ջանքերով կազմակերպել են միջոցառում՝ նվիրված Սոցիալական մանկավարժի միջազգային օրվան, որի ժամանակ տեղի է ունեցել 1-ին կուրսեցիների երդման արարողությունը:

- 2018 թ.-ի դեկտեմբերի վերջին ՈԻԽ-ն կազմակերպել է ամանօրյա տոնական միջոցառում ուսանողների համար:

## 7. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ և ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

<<Սոցիալական մանկավարժություն>> բակալավրի կրթական ծրագրում ընդունվելու համար հարկավոր է հանձնել՝

- Հայոց լեզու- մրցութային,
- *Օտար լեզու* – ոչ մրցութային /վճարովի համակարգի թափուր տեղերի առկայության դեպքում հաշվի է առնվում ավարտական քննություն կամ տարեկան գնահատականը:
- Մաթեմատիկա- ոչ մրցութային /հաշվի է առնվում դպրոցի ավարտական քննությունը կամ տարեկան գնահատականը/

<<Կրթության կազմակերպում>> և <<Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա>> մագիստրոսական կրթական ծրագրերում ընդունելությունն անցկացվում է բանավոր քննության ձևաչափով՝ ընդհանուր մանկավարժությունից: